Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Կոտայքի Ս. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝ Ինֆորմատիկա

Թեմա՝ **Մոտիվացիան, որպես ուսուցման կարևորագույն մաս**

Վերապատրաստող, մենթոր՝ Ն. Հովհաննիսյան

Ուսուցիչ՝ Ռ. Աղաբեկյան

Երևան 2023

Բ ո վ ան դ ակ ո ւ թ յ ո ւ ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3
1. Հանրակրթական պետական նոր չափորոշիչ....4
2 Մոտիվացիայի տեսությունը....7
3 Մոտիվացիան բարձրացնելու ուղիներ....9
4 Ինչպես բարձրացնել մոտիվացիան դասապրոցեսի ժամանակ....13
Եզրակացություն....18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ....19

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հետազոտական աշխատանքի նպատակ. հետազոտական աշխատանքի նպատակն է բացահայտել մոտիվացիայի դերը որպես ուսուցման կարևորագույն մաս, վերլուծել մոտիվացիայի դերը սովորողների մոտ ուսուցման ձգտումը բարձրացնելու հարցում, հատկապես «Թվային գրագիտության և համակարգչային գիտության» (այսուհետ ԹԳՀԳ) կամ «Ինֆորմատիկա» առարկայի ուսուցման շրջանակներում:

Հետազոտական աշխատանքի նպատակին հասնելու համար ձևակերպվել են հետևյալ **խնդիրները**.

1. Ուումնասիրել նոր ՀՊՉ-ի բովանդակային միջուկը,
2. Ուսումնասիրել մոտիվացիայի տեսությունը,
3. Բացահայտել մոտիվացիայի բարձրացման ուղիները դասապրոցեսի շրջանակներում,
4. Գտնել մեթոդներ, որոնք ուղղված կլինեն մոտիվացիայի բարձրացմանը՝ դրանք դասապրոցեսում ներդնելու նպատակով:

Արդիականություն. Ժամանակակից դպրոցում ուսուցման արդյունավետությունը կախված է նախ և առաջ մոտիվացիայից: Իսկ ի՞նչ է մոտիվացիան: Մոտիվացիան ներքին և արտաքին դրդիչ գործոններն են, որոնք, շարժառիթ հանդիսանալով,դրդում են մարդկանց իրականացնել գործողություններ, որպեսզի հասնեն նպատակին: Մոտիվացիան շատ կարևոր է արդյունավետ աշխատանքի համար: Այն ներքին ցանկություն է, որը մղում է դեպի առաջ՝ դեպի նախանշած նպատակը: Գրող Լես Բրաունը մոտիվացիայի մասին ասել է. «Ինչ-որ բան ցանկանալը բավական չէ, դու պետք է ձգտես դրան: Քո մոտիվացիան պետք է այնքան հզոր լինի, որ կարողանաս հաղթահարել այն խոչընդոտները, որոնք անխուսափելիորեն կհայտնվեն ճանապարհիդ: Երբ մարդը թույլ է, հոգնած, չունի գործելու, ապրելու, արարելու ցանկություն, դա կարող է լինել մոտիվացիայի բացակայության հետևանք: Այդ երևույթը շատ տեսանելի է դպրոցում՝ երեխաների մոտ: Երեխաները շատ հաճախ են հոգնում, ձանձրանում, որովհետև չեն հասկանում սովորելու հիմնական նպատակը, նրանք չեն կարող պատկերացնել սովորելու լավ կողմերը կամ առանց գիտելիքների դպրոցն ավարտելու բացասական հետևանքները: Հետևաբար մշտական քարոզները այդ մասին նրանց ոչինչ չեն տալիս, այլ միայն հոգնեցնում են, հաճախ էլ՝ հունից հանում: Դրա փոխարեն ուսուցիչը պետք է մտածի աշակերտներին մոտիվացնելու մասին, նրանց մշտապես հետաքրքիր առօրյայով ապահովի, որպեսզի ուսումնառության պրոցեսը նրանց համար ձանձրալի չթվա: Նրանք պետք է մշտապես ունենան փոքրիկ մոտիվացիաներ՝ գնահատականը, խրախուսանքի տարբեր տեսակները, տարբեր մեթոդներ ու միջոցներ, որոնք մշտապես հետաքրքիր կդարձնեն ուսումնառության

պրոցեսը: Կարծում եմ, որ ուսուցման գործընթացում մոտիվացիան շատ արժեքավոր ու կարևոր բաղադրիչ է: Ուստի որոշեցի ուսումնասիրել այս թեման ու վեր հանել այս թեմայի հետ կապված նրբությունները:

1.Հանրակրթական պետական նոր չափորոշիչ

Ի տարբերություն գործող չափորոշչի, նոր չափորոշիչը որդեգրում է վերջնարդյունքների ավելի համակարգված մոտեցում՝ ութ կոմպետենցիաների տեսքով: Կոմպետենցիան չափորոշիչը սահմանում է որպես «ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձև», որ հիմնվում է տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների վրա: «Լեզվական կոմպետենցիան», օրինակ, լեզուն դիտարկում է որպես «հասարակական կյանքին մասնակցության համապիտանի գործիք», հետևաբար կարևորվում է դրա իմացության այն աստիճանը, որը թույլ կտա այն կիրառել ակադեմիականից մինչ առօրյա շփման մակարդակում:

Դրական է, որ նոր չափորոշչում շատ են գիտելիքի ակտիվ սոցիալական կառուցում ենթադրող ձևակերպումները: Սա մեծացնում է հավանականությունը, որ կունենանք սովորողներ, որոնք իրենց չեն դիտարկի որպես գիտելիքի պասիվ սպառողներ և հասարակության զարգացման ակտիվ գործոն կդառնան:

Հանրակրթության պետական չափորոշչի առաջարկվող նախագծում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկայի վերջնարդյունքները թույլ են տալիս առարկան ուսումնասիրել ինչպես համակարգչի կամ թվային սարքի օգնությամբ, այնպես էլ առանց դրանց կիրառության: Դպրոցները, ելնելով իրենց առանձնահատկությունից, ինչպես նաև տեխնիկական հագեցվածության մակարդակից, հնարավորություն ունեն ընտրելու թե ինչպես են դասավանդում առարկան: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ միջին դպրոցի վերջնարդյունքները գրված են մոդուլյար կերպով, ինչը թույլ է տալիս ցանկացած մակարդակի կրթական կարիք ունեցող սովորողին հաջողության հասնել՝ չհիմնվելով նախորդ գիտելիքի վրա:

«Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» ծրագրի հիմքում դրված են չորս հիմնական գիտակարգային գաղափարներ. դրանք են՝

1) հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը,

2) թվային գործիքներն ու համագործակցությունը,

3) համակարգչային սարքեր և համակարգեր,

4) հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն:

Դրանց ենթագաղափարները և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները՝ ըստ կրթական աստիճանների և ըստ դասարանների:

Դպրոցական յուրաքանչյուր մակարդակում և առարկայի յուրաքանչյուր գիտակարգային հիմնական գաղափարի ուղղության մեջ ներառված վերջնարդյունքները, ակնկալում են աշակերտից ցուցադրել իմացական բարդության լայն շրջանակ, ինչպիսին որ առկա է «Բլումի Վերանայված Տաքսոնոմիայում». այն է՝ հիշելու, ըմբռնելու, կիրառելու, վերլուծելու, գնահատելու և ստեղծելու այսպես կոչվող իմացական կարողությունների մակարդակներում:

Առաջարկվող ծրագիրը հիմնված է մանրամասնորեն ընտրված այնպիսի բովանդակային չափորոշիչների վրա, որոնք հստակ են, կենտրոնացված են և մատուցվում են համաձայնեցված հստակ հաջորդականությամբ: Բոլոր վերջնարդյունքները կոդավորված են դպրոցական տարբեր մակարդակներում և դասարաններում, ինչպես նաև առարկային առնչվող ռեսուրսներում ու գնահատման թերթիկներում դրանց կառուցվածքն ու հաջորդականությունը միասնական պահելու նպատակով:

Օրինակելի ծրագրերում Հանրակրթության պետական չափորոշչի վերջնարդյունքների կոդերը ցույց են տալիս կապն ընդհանուր կարողունակությունների (գիտելիք, հմտություն, վերաբերմունք, արժեքային համակարգ), ինչպես նաև, ըստ դպրոցական մակարդակների, շրջանավարտի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հետ:

Ծրագիրը գլխավորապես տարբերվում է գործողից նոր կառուցվածքով, որը բերված է: Գիտակարգային չորս գաղափարների և դրանցից բխող թեմաների փոքր մասն է համընկնում «Ինֆորմատիկա» առարկայի գործող ծրագրի թեմաներին: Այս կառուցվածքն արտացոլում է ժամանակակից կրթական առաջադեմ համակարգերում կիրառվող առարկայի գիտակարգային գաղափարների կառուցվածքը:

Բացի կառուցվածքից, ծրագրի գլխավոր առանձնահատկություններից է որևէ թեմայի շրջանակում կիրառվող ծրագրային ապահովման և լուծումների ճկունությունը, ինչը հնարավորություն է տալիս ուսուցչին ընտրել, թե որ ծրագրային ապահովմամբ է նա ցանկանում դասավանդել տվյալ թեման:

Ստորև շարադրված են գիտակարգային առանցքային գաղափարների ընդհանուր հիմնավորումները:

1) Հաշվողականությունն (Computing) ու հասարակությունը

Համակարգչային տեխնոլոգիաներով աշխատանքը և դրանց ստեղծումն ազդեցություն ունի բոլոր մարդկանց վրա և ունի գլոբալ հետևանքներ այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են հեռահաղորդակցությունը, օգնող-օժանդակող տեխնոլոգիաները, սոցիալական ցանցերը, և վերջապես տնտեսությունն ամբողջությամբ:

Հաշվողականությունն առանցքային բաղադրիչ է բազմաթիվ մասնագիտությունների համար, իսկ թվային մեդիայի բովանդակությունն ազդեցություն է թողնում բոլոր քաղաքացիների և հասարակության վրա ընդհանրապես: Անձնական գաղտնիության, էթիկայի, անվտանգության և հեղինակային իրավունքի պահպանման սկզբունքները ներգործություն ունեն թվային ապահովության և անվտանգության վրա, ինչպես նաև ազդում են միջանձնային և հասարակությունների միջև փոխհարաբերությունների վրա:

2) Թվային գործիքներն ու համագործակցությունը

Թվային գործիքները համակարգչային ծրագրային լուծումներ են, որոնք թվային ֆորմատով արտադրում, բանեցնում կամ պահպանում են տվյալներ (օր՝ տեքստային խմբագրիչներ, նկարչական ծրագրեր, նկարների /տեսանյութերի/ երաժշտության խմբագրիչներ, սիմուլյատորներ, համակարգչային դիզայնի կամ հրատարակչական ծրագրեր): Թվային գործիքները կարևոր գործիքներ են հետազոտություն իրականացնելու, հաղորդակցվելու, համագործակցելու և սոցիալական, աշխատանքային կամ անձնական միջավայրեր ստեղծելու համար: Թվային գործիքների արդյունավետ օգտագործումը մեծապես ազդում է դպրոցում կամ աշխատանքում հաջողության հասնելու վրա:

3) Համակարգչային սարքեր և համակարգեր

Հաշվողական համակարգերը պարունակում են բաղադրիչներ, ինչպիսիք են սարքերը, ծրագրային ապահովումները, միջերեսները և ցանցերը, որոնց միջոցով միանում են համայնքներ, սարքեր, մարդիկ և ծառայություններ: Դրանք մարդ-համակարգիչ գործընկերության միջոցով հնարավորություն են տալիս մարդկանց ստեղծել, համագործակցել և սովորել: Բազմաթիվ հաշվողական համակարգերի դիզայնը թույլ է տալիս մարդկանց վերացնել սխալները, ընդարձակել և ստեղծել նոր համակարգեր:

4) Հաշվարկային (Computational) և ալգորիթմիկ մտածողություն

Հաշվարկային կամ ալգորիթմիկ մտածողությունը խնդիր լուծելու գործընթացի տեսակ է, որը մարդուց պահանջում է մտածել նոր ձևով, այն է՝ խնդիր լուծելու կամ լուծում ստեղծելու համար օգտագործել համակարգիչ: Արագորեն և ճշգրտորեն ծրագրային ապահովում գործարկելու համակարգիչների կարողությունը ստեղծում է նոր հնարավորություններ խնդիրներ լուծելու, դրանք մշակելու և ստեղծելու համար (https://iravaban.net/286446.html):

2Մոտիվացիայի տեսությունը

Մոտիվացիան սահմանվում է որպես շարժառիթ, ներքին և արտաքին գործոններ, որոնք դրդում են մարդկանց իրականացնել գործողություններ, որպեսզի հասնեն նպատակին:

Կան մոտիվացման բազմաթիվ տեսություններ: Այս մոտեցումները կենտրոնանում են մարդկային պահանջների վրա, ինչը ձևավորում է նրանց վարքագիծը, և թե ինչպես կարող են կառավարիչները ստեղծել պայմաններ, որպեսզի բավարարեն աշխատողներին:

Կա մոտիվացիայի երկու հիմնական տեսակ՝

Ներքին, երբ աշակերտը սովորում է հետաքրքրությունից դրդված, երբ դասը հաճույք է պատճառում նրան, երբ ավելի շատ գիտելիք է ցանկանում ստանալ:

Արտաքին, երբ ներգործում են արատաքին գործոններ՝ ծնողներին գոհացանել, բարձր գնահատական ստանալ, ընդունվել ուսհասատատություն և այլն:

Ուսուցչի գործն ավելի արդյունավետ կլինի, եթե կարողանա արտաքին մոտիվացիա ունեցող աշակերտների մոտ արթնացնել ներքին մոտիվացիա: Դա, իհարկե, բարդ գործընթաց է, բայց կարելի է հասնել դրան:

Կան նաև ընդհանրապես մոտիվացիա չունեցող աշակերտներ, որոնց մոտ բացակայում է հետաքրքրությունը տվյալ օտար լեզվի հանդեպ կամ ունեն ինքնավստահության պակաս: Այս աշակերտների հետ ցանկալի է աշխատել խմբային մեթոդով, ներառել խմբում կամ շարքում, բացահայտել՝ ինչ թեմաներ են նրանց հետաքրքում, թույլ տալ նրանց օգտագործել իրենց կարողությունները, պետք է նրանց

քաջալերել և ոչ մի դեպքում չկիրառել պատժի մեթոդը, ընդհանրապես պետք է խուսափել պատժից, արդյունավետ չէ:

Կան նաև ապամոտիվացված աշակերտներ, որոնց մոտ արտաքին որոշ գործոններ (առողջական, ընտանեկան և այլ խնդիրներ) առաջացնում են հետաքրքրության և աշխատունակության անկում, այսպիսի երեխաներին պետք է արագ հանել ստեղծված իրավիճակից, բացատրել անհասկանալի թեմաները, աշխատել նորից խմբային տարբերակով:

Սա՝ սովորողների մասով, սակայն դասավանդողը ինքը ևս պետք է մոտիվացված լինի, որպեսզի ստեղծվի այդ կապը սովորեցնողի և սովորողի միջև, և գործընթացն ունենա արդյունք: Ինչպե՞ս ստեղծել այդ կապը:

3Մոտիվացիան բարձրացնելու ուղիներ

Ինչպես նշվեց, ոչ միայն սովորողները, այլ նաև դասավանդողը պետք է մոտիվացված լինի։ Մոտիվացիայի հ**ինգ հիմնական գործոններն են՝**

- Ուսուցչի էնտուզիազմ և հստակ նպատակներ՝ կապված սովորողների հետ
- Ուսուցչի կողմից քաջալերման զգացում աշակերտի մոտ
- Աշակերտի մոտ զգացում, որ իսկապես ուսուցիչը հավատում է աշակերտի առաջադիմությանը և հաջողություններին
- Աջակցող մթնոլորտի ստեղծում դասավանդողի և սովորողների միջև, համբերատարություն սովորողի նկատմամբ
- Ուսուցչի իրական ներգրավվածություն, դասարանային և խմբային լավ հարաբերություններ։

Նաև կարևոր է ունենալ դասն ավելի հետաքրքիր դարձնելու հստակ մշակված ռազմավարություն.

1. Աշակերտի մոտ մոտիվացիա կարող է առաջանալ **հստակ պլանավորված դասից**, երբ ուսուցիչը ներկայացնում է այդ դասի կոնկրետ անելիքը, այսինքն աշակերտն ունենում է իր առջև դրված խնդիր, որը պետք է հաղթահարի։ Օրինակ՝

   Հարցրեք՝ արդյո՞ք աշակերտները հարցեր ունեն և պատասխանեք նրանց բոլոր հարցերին։

2. Մյուս ռազմավարությունն առաջարկում է տարբեր թեմաների, նաև առօրյային վերաբերող **թեմաների ներառումը դասապրոցեսի մեջ՝** ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով։ Խնդրեք աշակերտներին մտաբերել թեմաներ, որոնց մասին վերջերս կարդացել կամ լսել են լուրերով, ապա բաժանեք նրանց փոքր խմբերի, և թող պատմեն իրենց խմբին այն նորությունը, որի մասին լսել կամ կարդացել են։ Քիչ անց

դադարեցրեք փոքր խմբային քննարկումը և հարցերի միջոցով պարզեք՝ ինչ թեմաներով պիտի շարունակվի հետագա զրույցը, եթե տվյալ թեման հետաքրքրել է մյուս փոքր խմբերի աշակերներին, ապա նրանք նույնպես կարող են մասնակցել տվյալ խմբի թեմայի քննարկմանը։

Գրատախտակի վրա կարելի է գրել թեմաները, օրինակ՝

- Սպորտ, ֆուտբոլ, Օլիմպիական խաղեր և այլն
- Ֆիլմեր
- Հայտնի մարդիկ, կինոաստղեր և այլն
- Ճանապարհորդություն, տեսարժան վայրեր

3. Զարգացնել աշակերտի մոտ **կարդալու կարողությունը**, քանի որ այն աշակերտները, որոնք ունեն խնդիր կարդալու հետ, ունեն նաև խնդիր սովորելու հետ։ Բացի այդ, ընթերցանությունը օգնում է բառապաշարի հարստացմանը, ավելի հեշտ օտար լեզվով խոսք կազմելուն։ Սկզբնական շրջանում ընդհանրապես մոտիվացիա չունեցող աշակերտները ինքնուրույն կարող են ընտրել ընթերցանության նյութը։

4. Դասը զվարճալի դարձնել՝ **խաղերի վրա հիմնվելով**։ Խաղերն օգտագործելով որպես ուսուցողական գործիք՝ ոչ միայն օգնում է ավելի խոր ուսուցմանը, այլև ոչ ճանաչողական հմտությունների զարգացմանը՝ օգնում է մոտիվացվել

աշակերտներին, ավելի հեշտ ինտեգրվել դասապրոցեսին: Խաղերի վրա հիմնված ուսուցումը օգնում է նաև ձևավորել առողջ խմբային մրցակցություն դասարանում:

Մոտիվացիան պատասխանում է հետևյալ հարցերին

1. Ինչո՞ւ են աշակերտները սովորում:
2. Ի՞նչն է սովորողների համար ավելի հաճելի:
3. Ինչպե՞ս են պարգևները և պատիժները ազդում դասարանում սովորողի վրա:
4. Ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ մեր դասերը պլանավորելիս հիշել ենք այս բաները:

Չափելի. սովորողները պետք է զգան առաջընթաց, կարողանան ցույց տալ իրենց ակտիվությունն ու պատրաստվածությունը՝ գիտելիքների և կարողությունների ցուցադրման միջոցով:

Հասանելի. նպատակը պետք է լինի սովորողի հասանելիության սահմաններում:

Համապատասխան. նպատակը պետք է լինի ինչ-որ բան, որը կապված է սովորողի ցանկությունների կամ կարիքների հետ, որպեսզի այն մնա ներքուստ մոտիվացնող: Օրինակ, եթե սովորողը չի օգտվում սոցիալական մեդիայից, ապա նա շահագրգռված չի լինի աշխատելու այս նպատակին հասնելու համար:

Ժամանակի հետ կապված . մոտիվացված մնալու համար սովորողները պետք է իմանան, թե երբ կարող են ակնկալել հասնել իրենց նպատակներին, և ինչ պետք է անեն, եթե ճանապարհին դժվարությունների հանդիպեն:

Գրելը և սովորողները. գրելը կարող է գրավիչ, հետաքրքիր և ոգեշնչող գործունեություն լինելսովորողների համար: Երեխաները ակտիվ սովորողներ և մտածողներ են, սովորում են սոցիալական փոխազդեցության միջոցով:

Գրելը բարդ հմտություն է, որը զարգանում է միայն այն ժամանակ, երբ սովորողներին տարբեր հմտությունների և ռազմավարությունների միջոցով սովորեցնում են գրել:

• Խրախուսել սովորողների միջև համագործակցությունը, հնարավորություններ ընձեռել մտքերը ցրելու, նշումներ անելու, պլանավորելու, վերանայելու և այլնի համար:

•Տրամադրել տեսողական պատկերներ կամ խնդրել սովորողներին `նկարել իրենց նկարները՝ առաջադրանքների բովանդակությունը ապահովելու համար: Ընտրված թեմաները պետք է գրավիչ լինեն մեր սովորողների համար. օրինակ՝ առնչվող և ներքուստ մոտիվացնող: Կարող ենք առաջարկել գրել այն մասին, թե ինչ գիտեն:

•Անհրաժեշտ է նայել գրավոր առաջադրանքներին այլ տեսանկյունից. օրինակ՝ իրենց առօրյայի օրինակն ունենալով, դրա փոխարեն նրանք կարող են գրել իրենց կամ իրենց սիրելի ընտանի կենդանու առօրյայի, իրենց սիրելի գործունեության, սննդի և այլնի մասին:

• Խրախուսել, հպարտանալ իրենց գրածների ներկայացմամբ.օրինակ՝ սովորողները կարողեննկարել, ծանոթագրել և այլն:

• Պատասխանել գրավոր գաղափարներին, ոչ միայն բանավորին:

• Տալ հստակ և պարզ չափանիշներ և խրախուսել գրավոր առաջադրանքների ինքնուրույն / հասակակիցների ստուգումը:

• Ներառել սովորողների աշխատանքի ներկայացում, որը կախված է առաջադրանքի տեսակից:

Գնահատում

Գնահատումը կարևոր նշանակություն ունի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին մոտիվացիաների համար: Օրինակ՝ միայն գնահատականը և հետադարձ կապը մոտիվացնող կլինեն աշերտների համար և մյուսները նրանք պետք է իմանան, թե արդյոք գնահատված աշխատանքի այս հատվածը նպաստում է դասընթացի վերջնական գնահատականին:

Պարգևատրումները և պատիժները կարող են կիրառվել գործունեության մեջ կամ ընդգրկվել միշարք դասերի կամ դասընթացների ընթացքում: Դասի ընթացքում գործողությունները խաղերի և մրցումների վերածելը պարգևատրման և պատժի կիրառման հնարավորություն է տալիս: Թիմային աշխատանքը կարող է օգտագործվել նաև պարգևներ և պատիժներ կիրառելու համար, երբ թիմերը մրցում են դասարանում «դիրքի» համար կամ այլ պարգևների համար:

4Ինչպես բարձրացնել մոտիվացիան դասապրոցեսի ժամանակ

Մակրո և միկրո մոտիվացիա Մոտիվացիայի մեկ այլ տեսություն է մակրո և միկրոմոտիվացիայի տեսությունը:

Մակրոմոտիվացիան վերաբերում է այն դրդապատճառներին, թե ինչու է ինչ-որ մեկը սովորում: **Մակրոմոտիվացիան** երբեմն կոչվում էլայնածավալ մոտիվացիա:

Միկրո մոտիվացիան վերաբերում է նրան, թե ինչն է դրդում կամ ապամոտիվացնում սովորողին դասերի ընթացքում կամ դրանց միջև ընկած ժամանակահատվածում: Միկրոմոտիվացիան երբեմն կոչվում է փոքրամասշտաբ մոտիվացիա:

Չնայած սրանք երկու առանձին տեսություններ են, սակայն կարելի է միասին դիտարկել: **Մակրոմոտիվացիան** դիտարկելիս կարող ենք մտածել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մոտիվացիոն գործոնների մասին, որոնք սովորողներն ունեն սովորելու ընթացքում:

Մակրոմոտիվացիա, որն արտաքին է.

Չափահաս երիտասարդը կարող է երազել ի վերջո գաղթել ու անգլիախոս երկիր: Նա գիտի, որ դա անելու համար պետք է ունենա անգլերենի իմացության որոշակի մակարդակ: Սա և՛մակրոմոտիվացիա է, և՛արտաքին, քանի որ պետք է ունենա անգլերենի որոշակի մակարդակ, որպեսզի կարողանա արտագաղթել և այս հանգամանքը պարտադրված է:

Մակրոմոտիվացիա, որը ներքին է.

Սովորողը կարող է սեր ունենալ անգլիախոս մշակույթի հանդեպ, որը բխում է իր նախկին փորձից: Նա կարող է ունենալ ընկերներ կամ ընտանիքի անդամներ, ովքեր հարում են այդ մշակույթին:Նրա մակրո շարժառիթը սովորելն է, որպեսզի նա ավելի խորասուզվի այս մշակույթի մեջ, և դան երքին է, քանի որ բխում էնրա ցանկությունից, այլ ոչ թե ինչ-որ բանից, որ նա պետք էանի:

Այսպիսով վերոնշյալի միջոցով կարելի է տարբերակել մակրո արտաքին և ներքին մոտիվացիաները:

Կենսաբանական շարժիչներ

Կենսաբանական դրդապատճառներ չկիրառելը, կարող է բացասական ազդեցություն ունենալ մոտիվացիայի, հետևաբար նաև ուսուցման վրա: Ի՞նչ կարող ենք անել բացասական ազդեցությունը կառավարելու համար:

Կենսաբանական մղումներ

1. Ուտել և խմել. Ժամանակ տրամադրել ընդմիջումներին: Թույլ տալ դասարանում ջուր խմել:
2. Հարմարավետ լինելու, ցավից խուսափելու համար ապահովել համապատասխան նստատեղեր: Թույլտալ սովորողներին շարժվել:
3. Ստեղծել զով, ոչ թե տաք կամ սառը միջավայր:
4. Հստակ տեսնել և լսել:
5. Հասկանալ և հասկանալի լինել:
6. Լինել վերահսկողության տակ:
7. Հարգանք և կարգավիճակ ունենալ հասակակիցների առաջ:
8. Հանգստանալ և քնել, խուսափել հոգնածությունից:
9. Շարժվել, խուսափել անգործությունից:
10. Լինել շփվող, ընկերանալ:

Շատերն են ցանկանում դպրոցն ավարտելուց հետո սովորել անգլերեն, և այժմ կան էական ապացույցներ, որնրանք կարող են արդյունավետորեն նոր լեզու սովորել:

Կյանքի փորձ

Բարձր դասարանի աշակերտներն արդեն ունեն հարուստ կենսափորձ, որը դասարան բերելով հարստացնում են ամբողջ դասարանի ուսուցման պրոցեսը:

Մեծ մոտիվացիա

Վերաբերմունք

Մեր ուսուցման նպատակներից մեկը այն է, որ սովորողները չափազանց դրական վերաբերվեն համակարգչային գիտելիքներին և ընդհանրապես կյանքին: Նրանք թե՛ուսուցիչներին, թե՛դասընկերներին վերաբերվեն մեծագույն հարգանքով ու քաղաքավարությամբ: Բացի այդ նրանք սովորում են անգլերեն և պետք է հարգալից վերաբերմունք ցուցաբերեն ինչպես իրենց, այնպես էլ Անգլիայի մշակույթի, լեզվի, ժողովրդի նկատմամբ:

Օգնել սովորողներին լսել

Լսողության կորուստը կարող է անմիջական ազդեցություն ունենալ աշակերտների ուսման և կատարողականի վրա: Լսողական այս կորստի բացասական հետևանքները նվազեցնելու համար ուսուցիչները պետք է փորձեն հարմարեցնել «ծերացող» ականջը մի շարք ձևերով՝

• հստակ խոսել և այնպիսի տեղում նստեցնել խնդիր ունեցող սովորողին, որ նա տեսնի ուսուցչի դեմքն ու շուրթերը,

• լսումների և տեսանյութերի ձայնի կարգավորում,

• լսողական տեքստերի կրկնություն,

• օգտագործել կարճ ֆիլմեր և տեսանյութեր, որոնք օգնում են ըմբռնել լսածը, քանի որ սովորողները կարող են տեսնե լբանախոսների դեմքն ու շուրթերը,

• ապահովել, որ դասասենյակները քիչ աղմուկ ունենան:

Օգնել սովորողներին տեսնել

Տեսողական կարողությունը հատկապես կարևոր է կրթության մեջ, քանի որ ընդհանուր առմամբ ընդունված է, որ ամբողջ ուսուցման մոտավորապես 80%-ը տեղի է ունենում տեսողության միջոցով: Տեսողական խնդիրներ ունեցող աշակերտների համար ուսուցիչը պետք է հետևի հետևյալ քայլերին.

• Տպագիր տեքստի համար օգտագործել ավելի մեծ տպաքանակ:

• Համոզվել, որ սովորողները, որքան հնարավոր է մոտ են նստած գրատախտակին:

• Շատ պարզ գրել գրատախտակին:

• Համոզվել, որ դասարաններում շատ բնական լույս և գրատախտակի համար ուղիղ լուսավորություն կա:

Շարժունակություն

Շարժունակության ապահովման համար անհրաժեշտ է՝

• Համոզվել, որ աշակերտներն ունեն հարմարավետ աթոռներ և սեղաններ:

•Ավելի շատ ժամանակ տրամադրել աշակերտներին ամբողջ դասարանի հաղորդակցական գործողություններ կատարելու համար, որտեղ նրանք պետք է ոտքի կանգնեն և շարժվեն դասարանում:

Հիշողություն

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ճանաչողական զարգացումը, հիշելը և խնդիրների լուծումը կարող են մոտիվացիայի անկում ցույց տալ: Այս ճանաչողական անկումը հաղթահարելու համար, որը կարող է ավելի դժվարացնել նոր լեզու սովորելը, ուսուցիչները կարող են օգնել սովորողներին զարգացնել և պահպանել իրենց ճանաչողական կարողությունները մի շարք ձևերով.

• Ինտեգրել հիշողության վարժություններ դասերին:

• Համակարգված կրկնել և վերամշակել քերականությունը, բառապաշարը և արտահայտությունները:

•Խրախուսել սովորողներին օգտագործել իրենց հարուստ փորձը և ճանաչողական ռազմավարությունները, որոնք նրանք հաջողությամբ օգտագործել են անցյալում՝ իրենց ներկայիս լեզվի ուսուցման միջավայրում:

Վստահության ձևավորում / սթրեսի նվազեցում

Շատ սովորողներ վախենում են ձախողումից և անհանգիստ են, ինչը պայմանավորված էստար լեզու սովորելու անհաջող փորձերով: Ուսուցչի առանցքային դերը անհանգստության նվազեցումն է և սովորողի մոտ վստահության և ինքնավստահության ձևավորումը:

Ահա որոշ բաներ, որոնք ուսուցիչները կարողեն անել սթրեսը նվազեցնելու և սովորողների մեջ ինքնավստահություն զարգացնելու համար.

- Իմանալ, թե ինչ շարժառիթներ ունեն սովորողները լեզու սովորելու համար և համապատասխանաբար հարմարեցնել իրենց մեթոդաբանությունը:
- Օգտագործել հումանիստական մեթոդներ՝ ուսուցչի և սովորողների միջև կարեկցանք ձևավորելու համար:
- Կրճատել ուշադրությունը սխալների ուղղման վրա՝ սովորողների ինքնավստահությունը զարգացնելու համար:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոնշյալը, կարելի էասել, որ ուսուցչի պարտականությունն է սովորողների համար գրավոր առաջադրանքներ մշակել, որոնք կլինեն հաճելի, պրակտիկայով լի, իմաստալից ու նպատակաուղղված:

Մոտիվացիան կարող էփոխվել ժամանակի ընթացքում, սակայն ամենակարևորը հնարավորինս շատ բան իմանալն է սովորողների մասին՝ նրանց ավելի լավ հասկանալու համար: Մոտիվացիայի պատճառների բացահայտումը կարող է օգնել տեղեկացված որոշումներ կայացնել դասի բովանդակության և առանձին

սովորողների կարիքների վերաբերյալ: Աշխատանքը կատարելու համար բերել տնից ընկերների և ընտանիքի որոշ լուսանկարներ՝ սովորողներին ցույց տալու համար: Սովորողների մեծ մասը հիացած կլինի:

Նայենք դասարանից դուրս

Խրախուսենք մեր սովորողներին և հնարավորություն տանք նայել, թե ինչպես են տեղեկատվականտեխնոլոգիաները օգտագործվում դասասենյակից դուրս և օգտագործենք մեր գտած ցանկացած օրինակ: **Համացանցը** անգլերենի ակնհայտ աղբյուր է, բայց նաև գովազդի, տուրիստական տեղեկատվության, ճաշացանկերի, ֆիլմերի օրիգինալ տարբերակի և այլնի աղբյուր:

Մտածենք ապագայի մասին

Արդյո՞ք ակնկալում ենք, որ սովորողներն ապագայում երբևէ համակարգչային տեխնոլոգիաներ կօգտագործեն ու կարիք կունենան: Արդյո՞ք նրանք ավելի շատ աշխատանքային հնարավորություններ կունենան համակարգչային հմտությունների ավելի բարձր մակարդակով: Եթե մեր սովորողներից ոմանք կարող են այո պատասխանել այս հարցերին, գուցե արժե հիշեցնել սովորողներին այս մասին. Գտնել որոշ տեղական աշխատանքի հայտարարություններ, որտեղ համակարգչային գիտելիքները պարտադիր են: Մենք կարող ենք դասը հիմնել աշխատատեղերի շուրջ և առաջարկել օգնություն CV-ներգրելու հարցում: Սովորողներից ոմանց սա կարող է մղել ինֆորմատիկան դիտել ոչ թե որպես մի առարկա, այլ ավելին, որպես գործիք, որն օգնում է նրանց հասնել իրենց ապագա նպատակներին:

Սրանք ընդամենը մի քանի գաղափարներ են, թե ինչպես պահպանել մոտիվացիայի մակարդակը:

Ե զ ր ակ ա ց ո ւ թ յ ո ւ ն

21-րդ դարում հասարակությանն անհրաժեշտ է անհատ, ով ի վիճակի է ինքնուրույն որոշումներ կայացնել, պատրաստ է ինքնակրթվելու, գիտի ինչպես ապրել հայրենակիցների և օտարերկրացիների մեջ, պատրաստ է համագործակցել համատեղ արդյունքի հասնել ու համար, ընդունակ է մրցակցել միջազգային աշխատաշուկայում: Հետևաբար, ժամանակակից հասարակությունը բախվում է երեխաներին ուսուցանելու այնպիսի տեխնոլոգիա գտնելու խնդրին, որը կօգնի ելնել այն փաստից, որ աշակերտները դարձել են ոչ միայն ուսուցման առարկա, պասիվորեն ընկալելով կրթական տեղեկատվությունը, կարող են լինել դրա ակտիվ սուբյեկտներ, ինքնուրույն տիրապետելով գիտելիքներին: Ինքնակրթվելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և ընդանրապես կյանքի ռիթմին հետևելու

համար պետք է լինել մոտիվացված: Ինչպե՞ս լինել ինքնամոտիվացված և պահպանել մոտիվացիան. աշակերտը սովորում է դպրոցից: Ուսուցիչն է այն մարդը, ով պետք է ճիշտ ուղղորդի, սովորեցնի աշակերտին փոքր քայլերով հաջողության հասնելու արվեստը և այդ հաջողությունը հարատև պահելու հմտությունը: Չէ՞որ ուսուցիչները մշակներ են, ովքեր կերտում են վաղվա ապագան, անհատին, ով կկարողանա դիմակայել դարի մարտահրավերներին՝ ճկուն մտքի և հարուստ գիտելիքի, ստացած փորձի, համագործակցության շնորհիվ:

Այսպիսով կարելի էսահմանել, որ մոտիվացիան կյանքի խթանիչ ուժն է և այն ամեն պահ և ամեն վայրկյան պետք է լինի մարդու (մեր դեպքում աշակերտի) ուղեկիցը ուսման մեջ և կյանքում:

Չնայած ուսուցման ներկայիս առկա խնդիրներին՝ մոտիվացված ուսուցման միջոցով հնարավոր է լուծել այդ խնդիրները: Այդ առումով առաջարկում եմ.

- Կրթական և միջանձնային խնդիրներ լուծելու հմտության տիրապետում,
- Անկախ աշխատանք դասագրքերի հետ,
- Ակտիվ անհատականության կրթություն, նախաձեռնողականության, պատասխանատվության ձևավորում, համագործակցելու կարողություն,
- Անձնական որակների զարգացում,
- Նոր տեղեկատվության անկախ որոնում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՂՈՒՄՆԵՐ

1. https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%B8%D5%BF%D5%AB%D5%BE%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1
2. https://lib.armedu.am/
3. https://www.google.com/search?q=%D5%B4%D5%B8%D5%BF%D5%AB%D5%BE%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1%D5%B5%D5%AB+%D5%AF%D5%A1%D6%80%D6%87%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%A8+%D5%A4%D5%A1%D5%BD%D5%A1%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%A5%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4&rlz=1C1CHBD_ruAM1046AM1046&oq=&gs_lcrp=EgZjaHJvbWUqCQgEEEUYOxjCAzIJCAAQRRg7GMIDMgkIARBFGDsYwgMyCQgCEEUYOxjCAzIJCAMQRRg7GMIDMgkIBBBFGDsYwgMyCQgFEEUYOxjCAzIJCAYQRRg7GMIDMgkIBxBFGDsYwgPSAQkyNjkzajBqMTWoAgiwAgE&sourceid=chrome&ie=UTF-8
4. https://194school.org/
5. https://escs.am/am/category/standard?s=edu